

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԸ
ՋԱՆԳԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԼԵԶՎՈՒՄ

Ռ. Ն. ՇԱԼՈՒՆՑ

Սույն հոդվածի համար հիմք են ծառայել վերջին տարիներս զանգվածային լրատվության միջոցների լեզվում գործածված նորաբանությունները: Հատկապես ուսումնասիրել ենք «Հայաստանի Հանրապետություն», «Ծրեկույան Ծրեան», «Ազգ», «Հայաստան» թերթերի էջերում, ինչպես նաև ռադիոյի ու հեռուստատեսության հասարակական-քաղաքական թեմայով հաղորդումների («Լրաբեր», «Նորություններ», «Լուրեր») բնագրերում գործածված տերմինները:

Վերջին երկու-երեք տասնամյակում ժամանակակից արևելահայերենը համարվել է տարբեր կառուցվածք ունեցող նոր բառերով, կայուն կապակցություններով, դարձվածքներով, իմաստային նորաբանություններով: Այդ համարումը կատարվել է ինչպես լեզվի ներքին հնարավորությունների, ոճական տեղաշարժերի ու փոխադրությունների, այնպես էլ անհրաժեշտ պատճենումների և փոխառությունների հաշվին: Դրանցից շատերը, արձանադրվելով զանգվածային լրատվության միջոցների լեզվում, արագ քաղաքացիություն են ստացել, կայունացել՝ դառնալով մամուլի և հրապարակախոսության լեզվում ակտիվորեն գործածվող բառամաստային խմբերի անուամեն: Նման նորաբանությունների մանրադնին քննությունը համոզում է, որ դրանց կայունացմանը, ամրակայմանը նպաստում են ոչ միայն արտաբանական գործոնները (եթե առաջադել է նոր հասկացություն, ուրեմն պետք է անվանվի), այլև լեզուների ազդեցությունների և շփումների հետ մեկտեղ կան նաև ազգային լեզվի ներքին օրինաչափություններից բխող շատ գործոններ, ներլեզվական ազդեցություններ, որոնք նույնպես նպաստում են նորաբանությունների, այդ լեզվում նաև հասարակական-քաղաքական տերմինների առաջացմանը և դրանց կայունացմանը: Բառապաշարի փոքր ենթահամակարգերն իրենց հերթին կանոնավորում են գրական լեզվի փաստային համակարգը՝ այն ենթարկելով արդիականության պահանջներին, մշակում և կատարելագործում են տերմինահամակարգերը, հստակեցնում հաղորդակցության եղանակները:

Նորաբանությունների թուղն աճը, նրանց առաջացման գործընթացն ուղեկցվում են տերմինների արանջատմամբ ու վերամիավորմամբ, որոնք նույնպես մշակում և կանոնակարգում են զանգվածային լրատվության լեզուն, այն թոթափում ավելորդ զուգաձևություններից ու տարբերակներից:

Ջանդվածային լրատվության միջոցների և հրապարակախոսության լեզվում հորձածվող նորաբանությունները բազմազան են՝ թե՛ կառուցվածքային, թե՛ ոճական-գործառական, թե՛ իմաստային և թե՛ բառակազմական ակտիվության առումով: Հաշվի առնելով նրանց այս ամենաբնորոշ հատկանիշները և ծագումնաբանական առանձնահատկությունները՝ դրանք կարելի է ստորաբաժանել:

1) Իմաստային նորաբանություններ: Բառերը նոր իմաստներով կիրառելը, նրանց ոճական-գործառական որոտները ընդլայնելը՝ սերտորեն կապվում են բազմիմաստության սահմանների ընդարձակման հետ: Բառապաշարի հարստացումը չի դրսևորվում սոսկ բառարանային նոր միավորների առաջացմամբ. որքան բառերը կիրառվեն նոր իմաստներով, որքան ձեռք բերեն նոր նրբաբաններ, որքան տերմինները տարբերակվեն, մշակվեն, այնքան կհարստանա և կզարգանա լեզուն: Հաճախ շեղոք ոճի բառը հուզաար-

տաճառային նոր նրբերանգի ձեռքբերման շնորհիվ դառնում է «բարձր ոճի» բառ, կամ հակառակը, «բարձր ոճի» բառը, զրկվելով ոճական գունավորումից, անցնում է շեղոք շերտի ոլորտ, կիրառվում որպես տերմին: Քիչ չեն դեպքերը, երբ հնացած, հազվագեղ գործածություն ունեցող բառը կամ գիտությունն նեղ ոլորտում կիրառվող տերմինը հասարակական-քաղաքական նոր բովանդակություն է ձեռք բերում՝ դառնալով լրագրահրապարակաստության ոճում ակտիվ գործածվող տարր: Այսպես, օրհներգ բառը, որը նոր է հայերենում, ժամանակակից բառարաններում արձանագրված են նրա սարքերի իմաստները, խորհրդահայ մամուլի էջերում չէր կիրառվում պետական հիմնի իմաստով, ներկայումս այն, իբրև հասարակական-քաղաքական տերմին, ակտիվություն է ձեռք բերել, կանոնավոր գործածություն ունի մամուլի լեզվում և նշանակում է՝ հանդիսավոր երգ՝ որպես պետական կամ ազգային միասնության խորհրդանշ:

Ուտիկանություն տերմինը, որը բացի իր պատմական իմաստից մեր բառարաններում բացատրվում էր նաև որպես կապիտալիստական և միջհեղափոխական Ռուսաստանում «խիստ դասակարգի շահերը պաշտպանող» պետական մարմին¹, ներկայումս զրկվել է իմաստային այդ երանգից և կիրառվում է՝ ընդհանրապես հասարակության և պետության անվտանգությունը պահպանող մարմին՝ անկախ քաղաքական համակարգերից:

Փարոզություն բառը ընդարձակել է իր կիրառության ոլորտները՝ ձեռք բերելով հասարակական-քաղաքական տերմինի արժեք. ներկայումս այն զանգվածային հաղորդակցության լեզվում կիրառվում է նաև պրոպագանդ օտար տերմինին համարժեք՝ և կանոնավոր գործածություն ունի: Իր գործառական ոլորտներն ընդարձակել է նաև արտերկիր-ը. եթե մի քանի տարի առաջ այն հազվագեղ գործածություն ուներ, ապա այժմ հավասարապես կիրառվում է արտասահման բառին համանիշ:

Ընտրաշաղկ և փայտաշաղկ տերմինները, որոնք հասարակական-քաղաքական բովանդակությամբ գործածվում էին միայն արևմտահայ գրական տարբերակում, վերջերս սկսեցին գործածվել նաև արևելահայ մամուլի էջերում: Կամ դասադուլ՝ հասարակական-քաղաքական տերմինը, որը մեր բառարաններում տրվում է հեղափոխ շարժման, քաղաքական և դրանց արտերկրին բնորոշ երևույթ², ընդարձակեց իր «կիրառության ոլորտները»՝ ըմբռնվելով իբրև ընդհանրապես բոլորի ձև՝ անկախ տարածքային սահմաններից, և գործածական դարձավ հայերենի բոլոր ոլորտներում: Կազմվեց նաև նոր բառ՝ ջրադուլ՝ հայերենում առկա դասադուլ, հացադուլ և նենգադուլ տերմինների նմանակությամբ:

Միանգամայն նոր իմաստներով գործածվեցին և արագ քաղաքացիություն ստացան նաև այնպիսի բառեր, որոնք նոր չեն, իրենց կազմությամբ հարազատ են հայերենին, նախկինում նույնպես կիրառվել են հասարակական-քաղաքական բովանդակությամբ, բայց պետական նոր կառույցների, Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորների և դրանց կառավարման մարմինների հետ կապված՝ ձեռք բերեցին նոր բովանդակություն, վերաիմաստավորվեցին: Դրանք, կարելի է ասել, ներկայումս ամենագործածական տերմիններից են և հաճախ են հանդիպում զանգվածային լրատվության միջոցների լեզվում, ինչպես՝ ավագաբնի, մարզպետ, համայնք: Ժամանակակից գրական հայերենի բառակազմական հնարավորությունների օգտագործմամբ մի շարք պարզ բառերից ստեղծվեցին բարդ և բարդ ածանցավոր ձևեր՝ չիախտելով տերմինային համակարգայնությունը և միօրինակությունը, ինչպես՝

¹ Տե՛ս է դ, Ա զ ա յ ա ն, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976:

² Նույն տեղում:

մարզ	մարզայետ	մարզպետարան
քաղ	քաղապետ	քաղապետարան
ֆաղաֆ	ֆաղաֆապետ	ֆաղաֆապետարան
գյուղ	գյուղապետ	գյուղապետարան*

Իմաստային ընդարձակմանը կարող են նպաստել նաև լեզվի բառակազմական ճկուն հնարավորություններով ստեղծված ածանցավոր պատճենումները. ներկայումս աֆլանցի չի նշանակում միայն Աֆղանստանում ծնված, այլ նաև Աֆղանստանի դեմ պատերազմում՝ 1979—89 թվականների ընթացքում ծառայած խորհրդային զինվոր:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ իմաստային նորաբանությունները շատ են, և դրանց մեծ մասը առաջացել է չեզոք ոճի պատկանող բաների տերմինացման (ստոնցում, փաթեթ, աղտոտում, հաջորդալուծություն, պայմանավորվածություն), ինչպես նաև գիտության որևէ բնագավառի տերմինը հասարակական-քաղաքական նոր բովանդակությամբ կիրառելու հաշվին (երկխոսություն, լիցֆաթափում, բնագիծ):

2) Խառակամ տերմիններ: Այսպես են կոչվում այն նորաբանությունները, որոնք թեև իրենց լեզվական ատաղձով ամենեին էլ նոր չեն հայերենի համար, բայց խորե բարդություններ և ածանցավոր ձևեր նոր են: Սրանց մեծ մասը ստեղծվել է հենց լրագրողների ջանքերով և ժամանակ առ ժամանակ հանդիպում է մամուլի էջերում, ինչպես՝ նստացույց, նստացուցաբար, տարածաշրջան, բացախոս, բացախոսություն, առանձնագրույց, սեփականաշնորհում (զուգահեռաբար գործածվում է նաև մասնավորեցում), բազմակուսակցություն, ամբողջատիություն և այլն:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ զանգվածային լրատվության լեզվում կանոնավոր գործառնող նման կազմությունները հիմնականում առաջացել են լեզվի բառակազմական ներքին հնարավորությունների ճիշտ գործադրմամբ, բարեհունչ են: Դրանք կարելի է բաժանել երեք խմբի՝

ա) Հայերենին հարազատ կազմություններ՝ գեղասահք, բոնարսիս, սյուն, գեղասահող, տարածաշրջան, մենասահք, ճնշամիջոց(ներ), պատմամիջոց:

բ) Լրիվ պատեննումներ.

геополитика — աշխարհաքաղաքականություն,
многопартийность — բազմակուսակցականություն,
тележурналист — հեռուստալրագրող,
телемост — հեռուստակամուրջ:

գ) Կիսապատեննումներ: Մեծ քանակ են կազմում այնպիսի նորակազմությունները, որոնց բաղադրիչներից մեկը փոխառյալ է: Ընդհանրապես փոխառյալ բառ + հայերեն բառ կամ հակառակը՝ հայերեն բառ + փոխառյալ կաղապարներով բարդություններ ստեղծելու եղանակը նոր չէ հայերենում. այդպես ստեղծվել են հազարավոր տերմիններ, ինչպես՝ կինոհամայնապատկեր, կինոշարաք, միկրոմիջավայր, տեսաֆիլմ, կենսակիրքոնետիկա, կենսաէկոնոմիկա: Հարյուրավոր նորակազմություններ են առաջացել հայերեն հեռուստ և օտար լուսանկարչական տերմիններով, որոնք ուսերեն համապատասխան համարժեքների պատճենումներն են, ինչպես՝ հեռուստաշոու, հեռուստակադր, հեռուստառեպորտաժ, հեռուստաֆուրում, հեռուստասեանս, ռադիոբնկերություն, ռադիոլրագրող, ռադիոխոսք, ռադիոհաշվետվություն և այլն:

Նորակազմ բաների շարքը պետք է դասել նաև համազոր արժեք ունեցող այնպիսի բարդությունները, որոնց բաղադրիչները հստակորեն տարբերակ-

* Տերմինների այս ցանկը հաստատել է Հայաստանի Հանրապետության լեզվի պետական տեսչության հայերենի բարձրագույն խորհուրդը (Հայաստանի Հանրապետություն, 17. 07. 1996)։

ված են, զրվում են գծիկով և համապատասխանում են մեկ հասկացության: Նման բառերը ժամանակակից գրական հայերենում մեծ քանակ են կազմում և, ցավոք, ցայժմ չեն արձանագրվել համապատասխան բառարաններում, ինչպես՝ վազոն-տնակ, պատվեր-կարգադիր, տեսարար-սրհարան: Այսպիսի կառուցվածք ունեցող բարդությունների համար ակնառու է լեզվի ներքին օրինաչափություններից բխող՝ նման և մոտ հասկացությունների համապատասխանող տերմինների և անվանումների տարբերակման կարևորությունը: Վերջինիս անհրաժեշտությունը առավել զգացվում է բառերի սեռատեսակային ձևերը տարբերակելիս, հատկապես երբ հարկ է լինում անվանել միևնույն սեռի մեջ մտնող տարբեր տեսակները, պահպանել տրամաբանական և վերաբերական կապերը, հստակեցնել նրանց հարաբերությունը: Այսպես, արական հայերենի բառապաշարը համալրվել է մասնագիտություն և դրադմոնդ ցույց սվող այնպիսի կազմություններով, որոնց իմաստները հստակորեն տարբերակված են, ինչպես՝ նկարիչ՝ նկարիչ-ձևափոխ, նկարիչ-նմուշատեսակ, նկարիչ-ծեփագործ, նկարիչ-հարդարող, նկարիչ-գեղագետ: Նույնը վերաբերում է նաև առևտրի, մարզական կյանքի, արվեստի և այլ բնագավառների բազմաթիվ անվանումների, ինչպես՝ ցուցահանդես՝ ցուցահանդես-տոնավանո, ցուցահանդես-համերգ, ցուցահանդես-մրցույթ, ցուցահանդես-դիտում, խանութ՝ խանութ-դպրոց, խանութ-սրահ, համերգ՝ համերգ-դասախոսություն, համերգ-ներկայացում, համերգ-հաշվետվություն և այլն: Այս կարգի նորարարությունների շարքը համալրում են ածական + ածական կաղապարով առաջացած բազմաթիվ բարդություններ, որոնք հաճախակի են կիրառվում մամուլի էջերում, ռադիոհեռուստատեսային հաղորդումներում, ինչպես՝ գաղափարական-բարոյական, գաղափարական-գեղագիտական, մշակութային-հասարակական, էլեկտրոնային-հաշվողական և այլն:

Հայերենի բառակազմական ճկուն համակարգը հնարավորություն է ընձեռում օտար շատ տերմինների, այդ թվում նաև միջդիտական համանունների ասրեբերկման ու կանոնարկման, նոր իմաստների վերանվանման: Այս հարցում առանձնապես մեծ է ՀՀ լեզվի պետական տեսչության դերը, որը զանգվածային լրատվության լեզվում զուգահեռ գործածություն ունեցող ձևերը ըստ կիրառության ոլորտների տարբերակում և կանոնարկում է, ինչպես՝

декларация — 1. հռչակագիր, 2. հայտարարագիր (մաքս)

профилактика — 2. կանխարգելում, 2. ախտականիում, 3. հանցականխում

мотив — 1. շարժառիթ, 2. պատճառաբանություն:

3) Կախյալ բառակազմություններ: Նորարարությունների շարքում մի առանձին ենթահամակարգ են կազմում բառակապակցությունները, որոնց բաղադրիչները թեև առանձին վերցրած նույնպես նոր չեն, բայց իբրև բառակապակցություն շարահյուսական որոշակի հարաբերություններ են արտահայտում, նոր հասկացության անվանումներ են և արդեն կայունացված են: Նման կապակցությունները հիմնականում ուսաց լեզվից կատարված պատճենումներ, կիսապատճենումներ և ազատ թարգմանություններ են, ինչպես՝ չմիացած երկրներ, տիեզերքի ռազմականացում, ժողովրդական դիվանագիտություն, խաղաղության երթ, բողոքի երթ, ռազմական լիցիաբափում, ֆաղափակյալ դիմակայում, ֆաղափակյալ ընտրություն, խաղաղության ավտոբուս, լնացման տարիներ և այլն:

Շատ բառակապակցություններ, համապատասխանելով միանդամայն հակադիր հասկացությունների, արտահայտում են հակառակ իմաստներ: Նման բառակապակցությունների հականշարին հարաբերությունները հիմնականում դրսևորվում են. ա) բառակապակցության կողմում առկա հակառակ իմաստի միջոցով՝ աստղային պատերազմ-աստղային խաղաղություն, ներքին սփյուռք-արտաքին սփյուռք, միջուկային տերություն-միջու-

կազմեժ տերություն, Բաղաճական երկխոսություն-Բաղաճական առնական-տուն, Բ) Ժխտական մասնիկների և ածանցների միջոցով՝ միջազգային հարաբերությունների կայունություն-միջազգային հարաբերությունների ապահովությունը, միջուկային շարժում-հակամիջուկային շարժում, միջուկային պետություն-աջ միջուկային պետություն, արտոնված սան-րահավաճ-չարտոնված հանրահավաճ և այլն:

Հաճախակի դործառվող բառակապակցությունները հիմնականում հասարակական-քաղաքական տերմիններ են և ներառում են այնպիսի փոքր ենթահամակարգեր, որոնք վերաբերում են նրա կարևորագույն ոլորտներին՝ միջազգային կյանք, դիվանագիտություն, ռազմական, պետական-վարչական ղործ և այլն: Նման բովանդակություն ունեցող կապակցությունների մեծ մասը երկանդամ անվանական կառույցներ են: Հատկապես գերակշռում են որոշիչ-որոշյալի, հասկացուցիչ-հասկացյալի հարաբերություններ արտահայտող կապակցությունները: Սրանց կազմում իբրև ստորադաս անդամներ հանդես են գալիս ածականները և գոյականները, որոնք բնութագրում, լրացնում են գերադաս քաղաղորիչի իմաստը, տարբերակում տերմինի բովանդակությունը: Բառակապակցությունը ստեղծվում է քաղաղորիչներից մեկի՝ հիմնականում լրացյալի իմաստից, որով պայմանավորված է տերմինի հիմնական բովանդակությունը, ինչպես՝ չմիանալու Բաղաճականություն, ժողովուրդական դիվանագիտություն, վարչախրամայական համակարգ, ամբողջատի-րակալ վարչակարգ, բողոքի երթ, խաղաղության գոտի և այլն: Նման կազմությունների շարքում քիչ չեն հատուկ անուններից առաջացած կապակցությունները, ինչպես՝ ստալինյան շրջապատ, խրուշչովյան ձևակալ, գորբուշովյան վերակառուցում, դարաբաղյան հիմնահառց, արցախյան շարժում, սում-գայիթյան նախնիք և այլն:

Ըստ ծագումնաբանական հատկանիշի սրանք ևս կարելի է բաժանել երկու խմբի. ա) միայն հայերեն քաղաղորիչներով կազմություններ, Բ) խառը կազմություններ: Առաջինին կարելի է դասել՝ հայկական սփյուռք, կանաչների շարժում, սպիտակ ցեղասպանություն, խաղաղության ալիք, երկրորդ շարքին՝ խորհրդային բյուրոկրատիա, սոցիալիզմի ստալինյան ըմբռնում, գորանցային սոցիալիզմ, սովետային էկոնոմիկա և այլն:

Ձանգվածային հաղորդակցության շնորհիվ կարելի է առանձնացնել մի շարք բառեր, որոնք որոշակի դեր են կատարում նոր քառակապակցությունների կազմման գործում: քաղաղորիչներից մեկը, դառնալով հիմնաբառ և կապակցվելով գոյականին և ածականին, ստեղծում է շարահյուսական նման հարաբերություններ արտահայտող կապակցություններ՝ չխախտելով բառակազմական համակարգայնությունը: Սրանց կայունացումը կապվում է որոշակի երևույթների և հասկացությունների առաջացման արտաբերականական գործոնների հետ, և մեծ մասի հիմքում ընկած է գերադաս կամ ստորադաս անդամներից մեկի փոխաբերական իմաստը: Օրինակ՝ զանգվածային հաղորդակցության շնորհիվ հաճախ կարելի է հանդիպել գոյական-գոյական կաղապարով կազմված մի շարք կապակցությունների, որոնց կազմում իբրև ստորադաս անդամ հանդես է գալիս խաղաղության տերմինը, ինչպես՝ խաղաղության նալ, խաղաղության նամբար, խաղաղության ավտոբուս, խաղաղության ալիք, խաղաղության գոտի, խաղաղության երթ, խաղաղության մասնաշենք, խաղաղության հեծանվավազ:

Այսպիսի շատ կազմությունների շարքում կարելի է առանձնացնել և՛ շնորք, և գնահատողական (դրական կամ բացասական) նրբերանգով գործառվող բառեր, որոնք ավելի կոնկրետ և միանշանակ իմաստ են արտահայտում բառակապակցության կազմում: Նման կապակցությունները կարելի է բաժանել երկու խմբի՝ ա) կրկնվում է ստորադաս անդամը. տիեզերական-տիեզերական մրցավազ, տիեզերական սպառազինություն, տիեզերական գինաքափում, տիեզերական վահան, տիեզերական թուր, միջուկային-միջու-

կային զինանոց, միջուկային հզորություն, միջուկային սպառնալիք, միջուկային պոտենցիալ, միջուկային մրցավազք, միջուկային հավասարակշռություն:

բ) Կրկնվում է գերադաս անդամը. շարժում-շմանալու շարժում, հասկապատերազմական շարժում, կանաչների շարժում, արցախյան շարժում, խաղաղության շարժում, գոտի-հանգստի գոտի, խաղաղության գոտի, միջուկագերծ գոտի. սև գոտի:

4) Նորագույն փոխառություններ: Մամուլի և հրապարակախոսության րառապաշարում մի առանձին ենթահամակարգ են ներկայացնում օտար կազմությունները: Սրանք անհրաժեշտ փոխառություններ են, որոնք հաճախ են անցել ինչպես ուսերենից, այնպես էլ նրա միջոցով՝ այլ լեզուներից: Լեզվաբանական վերջին տարիներս ավելի ակնհայտորեն է զգացվում մամուլի լեզուն անհարկի օտարաբանություններից մաքրելու, հայերենի ներքին հնարավորություններով հարմար համարժեքներ ստեղծելու միտումը: Այս կարևոր հորժին ակտիվորեն մասնակցում են լրագրողները: Աստիճանդերձ, դժվար է պատկերացնել մեկուսացված և տարանջատված լեզու, և հայերենն էլ բացառություն չէ:

Նորագույն փոխառությունները բազմազան են իրենց գործառական ուղորտներով: Ամենից առաջ կարելի է առանձնացնել ա) հասարակական-քաղաքական տերմիններ. ինչպես՝ բրիֆինգ (այժմ՝ ճեպագրույց), նեոգլոբալիզմ, լոբբի, լոբբիստ (այժմ սատար, սատարող), եվրոպեիստ, խուճա, ամերիկանիզմ, պոստ, պոստչիստ, մաֆիա, իմփիչմենթ և այլն: Սրանց կարելի է դասել նաև հունական-նեո (neos-նոր) արմատով և -լոզմ, իստ փոխառությամբ վերջածանցներով բաղադրված կազմությունները՝ նեստալիզիզմ, նեոկոնսերվատ, նեոբուլջեիզմ, նեոստոմիզմ, նեոմաքսիսիզմ, նեոֆրեյդիզմ:

Վերջին շրջանում մի շարք տերմիններ են առաջացել հատուկ անուններից. ինչպես՝ մադիզմ, ստալինիզմ, բրեժնեիզմ. նման ձևերից շատերն աստիճանաբար լրանց տեղը զիջում են հայերեն -ալիսմ և -ություն ձևանցներով կազմություններին. ինչպես՝ մառականություն, ստալինականություն, բրեժնեականություն, մսուական, ստալինական, բրեժնեական:

բ) Այլ բնագավառների տերմիններ: Սրանք գիտության տարբեր ոլորտների վերաբերող փոխառություններ են, որոնք հանդիպում են լրագրային հոդվածներում, ռադիոհաղորդագրություններում, հայտարարություններում ու ազդերում, և առաջինների համեմատ սակավ գործածություն ունեն. Դրանցից են՝ մարկետինգ, ռեյտինգ, ակնհայտ, մենեջմենթ, դիզայներ, լալներ և այլն:

Հայերենը փոխառությունների հարցում փուլորեն չի հետևել ուսերենին: Ռուսաց լեզվում կիրառվող բազմաթիվ օտար տերմիններ փոխարինվել են հայերեն համարժեքներով, ինչպես՝ սեսիա, էսթետիկա, ռեժիս, կոմպոզիտ, տեռոր, տեռոիստ, լոգոնգ, միտինգ. ռեզիդեն, ստարտ, պրոցես, հումանիզացիա, վալյուտա, ռեկլամ, ֆոնդ, ֆալսիֆիկա, մինիստր, ասոցիատիվ, ասոցիատիվ, գեղագիտություն, փոխգիշտ, անաբեկչություն, անաբեկչ, կարգախոս, հանրահավաք, տարածաշրջան, մեկնարկ, գործընթաց, մարդկայնացում, տարադաս, գովազդ, հիմնադրամ, խմբակցություն, նախադաս, տեսականի: Այդ բանին նպաստել են նաև նրանց մի մասի կիրառությունները արևմտահայերենում, որոնք վկայում են գրական երկու տարբերակների բառապաշարի մերձեցման միտումների մասին:

Այսպիսով, ամփոփելով արդյունքները, կարելի է եզրակացնել.

1) Զանգվածային լրատվության և հրապարակախոսության լեզվում դործածվող տարբեր բնույթի նորաբանությունների բուռն աճը պայմանավորված է դրական հայերենի պարզացման արդի միտումներով:

2) Նորաբանությունների մեծ մասի առաջացումը կարելի է բացատրել ներկայումս գործող բառակազմական կաղապարների ընդհանրությունների ակտիվ դերով, լեզուների փոխադարձ շփմամբ, ազդեցություններով, արտալեզվական հանգամանքներից բխող գործոնների համանմանությամբ:

3) նորաբանությունների մեծ մասը, գրեթե 70 տոկոսից ավելին, գիտության տարբեր բնագավառների վերաբերող տերմիններ են, որտեղ առանձնապես զերակշիռ դեր ունեն հասարակական-քաղաքական տերմինները, որոնք այդ ոլորտի կարևորագույն նշանակություն ունեցող հասկացությունների անվանումներ են:

4) 70-ական թվականներից հետո զանգվածային հաղորդակցության բառապաշարի համակարգում զգալի չափով աճել է կայուն բառապաշարացումների քանակը: Այստեղ զերակշռում են այն կազմությունները, որոնց երկու և ավելի բաղադրիչները հայերեն են: Խառը կազմությունները և կիսապատճենումները ավելի փոքր քանակ են կազմում: Կրճատվել է նաև անհարկի փոխառությունների թիվը:

НОВЕЙШИЕ ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКИЕ ТЕРМИНЫ В ЯЗЫКЕ МАССОВОЙ ИНФОРМАЦИИ

Р. Н. ШАЛУНЦ

Р е з ю м е

В последние два десятилетия современный восточноармянский литературный язык пополнился новыми общественно-политическими терминами, построенными по разным словообразовательным моделям. Большая их часть активно используется в языке средств массовой информации. В частности, преобладают смысловые неологизмы, возникшие под влиянием других языков, терминологические новообразования, кальки и полукальки, а также словосочетания. Сравнительно меньшее место занимают заимствования.

Появление большей части общественно-политических терминов обусловлено действующими в настоящее время универсальными моделями, а также различными экстралингвистическими факторами.